

ՌԻՄԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Գորիսի պետական համալսարան

Բան. գիտ. թեկն.

[rima\\_stepanyan\\_1976@mail.ru](mailto:rima_stepanyan_1976@mail.ru)

### ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՄԻՖԵՐԸ ՀՐԱՉՅԱ ԹԱՄՐԱԶՅԱՆԻ ՊՈՆԶԻԱՅՈՒՄ

**Բանալի բառեր և արտահայտություններ.** միֆ, միֆակիրառում, Սուրբ գիրք, պոեզիա, քաղաք, աղե արձան, Ղովտ, բառ, Քրիստոս, Աստված:

**Ключевые слова и выражения:** миф, применение мифа, Священная книга, поэзия, город, соленая статуя, Ковт, слово, Христос, Бог.

**Key words and expressions:** myth, myth using, Holy book, poetry, city, salt monument, Ghovt, word, Christ, God.

1980-ականներին գրականություն եկած բանաստեղծական սերնդի դիմապատկերն ամբողջացնում են մի շարք բանաստեղծներ, ովքեր ստեղծեցին գեղագիտական սեփական արժեհամակարգը և իրենց որոշակի դերն ունեցան բանաստեղծական մտքի մերօրյա զարգացումներում: Մերնդի տաղանդավոր ներկայացուցիչներից է Հրաչյա Թամրազյանը, ում համար ստեղծագործական առաջին իսկ քայլերից պարզ էր. «...երբ մարդու կյանքի և խոսքի հուները համընթաց են, իսկական գրականություն է ծնվում, և ստեղծագործությունն իսկապես դառնում է գրողի կենսագրությունը»<sup>1</sup>:

Հարուստ է բանաստեղծի՝ այլևս կենսագրություն դարձած ստեղծագործությունը՝ շուրջ երկու տասնյակ բանաստեղծական ժողովածուներ, Նարեկացուն և նարեկյան դպրոցին նվիրված

---

<sup>1</sup> Հ.Թամրազյան, Գրականությունը լինելություն է, «Իրավունքը de facto», 2009, թ. 22, 27-30 մարտ, էջ 19:

մենագրություններ, ռուս և համաշխարհային գրականությունից կատարված թարգմանություններ և այլն:

Քննության կառնենք Հրաչյա Թամրազյանի՝ միֆապոետիկայի առումով բավականին ուշագրավ պոեզիան, որտեղ գերիշխում են սուրբգրային թեմաների անդրադարձումներն ու միֆերը, Տիրոջը դիմելու բանաստեղծական հնարանքը.

-Ո՛չ մի գոյություն չկա՛ առանց քեզ,

Առանց քեզ ոչի՛նչ գոյություն չունի<sup>2</sup>:

Գաղտնիք չէ՝ Սուրբ գիրքն իր ստեղծման օրից ներշնչման աղբյուր է եղել արվեստագետների համար: Հատկապես 19-20-րդ դարերում Սուրբ գրքին մոտեցել են իբրև մշակութային կոթողի՝ քաղելով սյուժեներ, բարոյական սկզբունքներ, խորհրդանիշներ, միֆեր:

Այս առումով ուշագրավ է Ժենյա Քալանթարյանի դիտարկումը. «Աստվածաշունչ մատյանն իր մեջ ամփոփում է մարդկության հազարամյակների փորձը և ներկայացնում է առանց երեսպաշտության, որովհետև այնտեղ հավասարապես նկարագրվում են բարին ու չարը, մարդու առաքինությունը, հզորությունը, բայց և միաժամանակ՝ նրա ստորությունը, անբարոյականությունը, դավաճանությունը և այն ամենը, ինչը հակասում է Աստծո պատվիրաններին»<sup>3</sup>: Ըստ գրականագետի՝ երևույթն ինքնին պատճառաբանված է. հավերժական այս հոլովապտոստում ամեն դեպք իր զուգահեռը, իր նախօրինակն ունի Աստվածաշնչում, ինչն էլ վառում է արվեստագետների երևակայությունը<sup>4</sup>:

80-ականների պոեզիայում անհատի անձնական ապրումների բանաստեղծական ընկալումները յուրահատուկ կերպով դրսևորվեցին: Աշխարհաճանաչման համապատկերում առաջնային դարձան ինքնաճանաչման խնդիրները: («Այո՛, ինքնաճանաչման միջոցով քեզ համար բացվում է և աշխարհը: Դա է բանաձևը»<sup>5</sup>): Բանաստեղծները փորձում էին ճանաչել մարդուն, տիեզերքը, Աստծուն, գտնել կամ վերագտնել ներդաշնակ կապը բնության հետ, ասել է թե՛ հասնել ներդաշնության: «Ներդաշնությունն է ամենի հիմքում» (ՄԻՄ, էջ 56),- գրում է Թամրազյանը՝ համոզվունքով՝ մարդու ներաշխարհի ու արտաշխարհի,

---

<sup>2</sup> Հ.Թամրազյան, Մայր հղացք, Ե., «Նաիրի», 2008, էջ 220: (Թամրազյանից բերվող բանաստեղծական մեջբերումների համար այսուհետև կնշվեն ժողովածուն և էջը:)

<sup>3</sup> Ժ.Քալանթարյան, Գրական հորիզոններ, Ե., «ԵՊՀ», 2008, էջ 113:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 113:

<sup>5</sup> Հ.Թամրազյան, Գրականությունը լինելություն է, «Իրավունքը de facto», 2009, թ. 22, 27-30 մարտի, էջ 19:

մարդու ներկայի ու անցյալի միջև կապ ստեղծողը բանաստեղծությունն է, որն էլ վերախմբման արժեքն է մարդու և հասարակության կապը, մարդու տեղն այս աշխարհում և նրա առնչությունը գոյության առեղծվածին: «Այսինքն՝ ի՞նչ է մարդը, ո՞վ է մարդը տիեզերքում, ինչպե՞ս է նա հարաբերվում հավերժի հետ, սերունդների երթի հետ: Եվ այդ տիրույթում է, որ մարդն առնչակցվում է աստվածայինին»<sup>6</sup>: Ստեղծագործող մարդը, ըստ բանաստեղծի, «ձգտում է Աստծուն վերահայտնաբերել իր մեջ», և հենց այդ պահերին է ստեղծագործում: «...ինքդ քո մեջ ու քեզինից դուրս փորձում ես քեզ գտնել»<sup>7</sup>: Մրանք, իրավամբ, համընկումների և ներշնչանքի երջանիկ պահեր են: Թամրազյանի բանաձևամամբ՝ ներշնչանքի հանճարեղ բունկումը Բանն է՝ ամեն ինչի սկիզբը («Քանզի աշխարհի սկիզբը Բանն էր» (AP, էջ 171))՝ նաև բառի («Բզուր չէ բառ ու բան ասվում»), ինչի միջոցով «ճանաչում ենք աշխարհը, գուցեև աշխարհը մեզ, քանի որ այն, **իբրև ներքին տեքստ, մայր բնագիր**, արտացոլում է աշխարհը և հաղորդակցության եզրեր է նշում մարդու և բնության միջև: Այն ներշնչանքի արդյունք է և կապում է մարդուն «աստվածաշունչ» և «աստվածահունչ» աշխարհի հետ»<sup>8</sup>:

Թամրազյանի բանաստեղծական հանգրվաններում այս աշխարհը տարբեր անուններ է կրում՝ «Ապակե քաղաք», «Ձայների կղզի», «Նոր տոմար», «Աղեղնավոր», «Լռության ծես», «Պաշարված ամրոց», «Հարասություններ», «Մի հոգու թատրոն», «Ասացող երկիր», «Մայր հղացք», «Սրբազան խավար» և այլն: Մակայն անելիքը մեկն է. «Դու ստիպված ես քո ներսում պեղել //Չոզևոր կյանքի թաքուն բանալին- //Ձգացմունքներդ՝ քեզինից դուրս հեղվող, //Մերն՝ առաքված առ անիմանալին...» (ԱԵ, էջ 11), «Ու հսկում է նա, ու նրա հոգին //Աղեղ է երկրի – երկնքի միջև» (ԱԵ, էջ 82): «Չոզևոր կյանքի թաքուն բանալին» պեղելուց հետո բանաստեղծը դիմում է Տիրոջը.

Եվ դու- խորագետ, Մեծ աղեղնավոր,  
Նշան ես բռնել Սուրբ կիզակետին,  
Եվ տիեզերքում – կույր ու մենավոր  
Չնգում է անհուն շառաչը նետի (ՉԿ, էջ 248):

Իսկ այդ շառաչը մեզ ուղղորդում է դեպի սուրբգրային «Ապակե քաղաք»: Համանուն բանաստեղծության բնաբանը քաղված է

<sup>6</sup> Հ.Թամրազյան, Վերախմբման արժեքն այս աշխարհում և նրա առնչությունը գոյության առեղծվածին, «Քաղաքացիական ծառայություն», 2007, 29 օգոստոսի, թ. 32(196):

<sup>7</sup> Հ.Թամրազյան, Ժամանակը գալիս ու անցնում է անհատի միջով, «168 ժամ», 2007, 25 դեկտեմբերի:

<sup>8</sup> Հ.Թամրազյան, Հարասություններ, Ե., «Նաիրի», 2003, էջ 462-463:

Աստվածաշնչից (Յայտնութիւն սրբոյն Յովհաննու առաքելոյ եւ Աստուածաբան աւետարանչի, Գլուխ ԻԱ), որտեղ ներկայացվում է Սուրբ քաղաքը՝ նոր երկնային Երուսաղեմը, որ իջել է երկնքից՝ Աստծո մոտից՝ զարդարված ու պատրաստված, ինչպես հարսն իր փեսայի համար: Սուրբ Հովհաննէսին ուղեկցում է Աստծո յոթ հրեշտակներից մեկը, ով իր ձեռքում ունի ոսկե եղեգ՝ քաղաքը, նրա դռներն ու պարիսպները չափելու համար: Իսկ քաղաքը մաքուր ոսկի է՝ նման մաքուր ու պայծառ ապակու: Ահա այս սուրբգրային քաղաքն ենք տեսնում Թամրազյանի «Ապակե քաղաք» վերնագրվածի առաջին հատվածում: Քաղաքը նրբերիզ է, անձեռակերտ, ինչպես ապակե վճիտ ապարանք, «ուր ձերմակ, ճախրող մի մանուկ //Քաղաքն է ոսկի եղեգնով չափում,... //Քաղաք, երկնային պայծառ շափյուղա, //Քաղաք, երկնային բյուրեղ ու հակինթ» (ԱՔ, էջ 40): Բանաստեղծության երկրորդ հատվածում գործ ունենք արդեն մազե կամուրջների հետ. «Եվ փշրվում է վճիտ ապակին»: Հասկանալի է՝ մազե կամուրջները հիշեցնում են դատաստանի օրվա մասին: Պատկերն իհարկե մետաֆորիկ է. երկնայինի ու երկրայինի բախում, «Եվ հայելային մի ցուլացում է //Մտում ինձ կորած իմ նմանակից»: Սա նաև բանաստեղծի ներքին և արտաքին քաղաքների, ասել է թե՛ ներաշխարհի և արտաշխարհի հանդիպում է, բանաստեղծի բանաձևմամբ, Միջնաշխարհում՝ «...ներաշխարհի ու արտաքին աշխարհի հպման, գոյավորման, խաչասերման մի տարածություն, որի տատանվող եզրագծերով հոգին շոշափում է եւթյունների աղոտ աշխարհը և սնում նրանցով իր տարածական խորքերը»<sup>9</sup>:

Խոսելով Հրաչյա Թամրազյանի ներքին քաղաքագրության մասին՝ Շուշանիկ Թամրազյանը նկատում է. «Բանաստեղծի ներքին քաղաքներում միշտ անդրադառնում են արտաքին քաղաքների լույսերն ու արձագանքները: Ներքին չի նշանակում ժամանակից կտրված, օտարված, ճիշտ հակառակը. ներքին քաղաքում ժամանակը, տարածությունը, կարելի է ասել մինչև վերջ յուրացված են, վերածված են ներքին ինչքի»<sup>10</sup>: Իսկ «Ապակե քաղաք»-ում, ըստ նրա, բանաստեղծի երկու աշխարհները «հանդիպել են իրար, փոխակերպել քաղաքի դեմքը՝ վերածելով այն միաժամանակ ներքին և արտաքին կատեգորիայի»<sup>11</sup>:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 453:

<sup>10</sup> Շ.Թամրազյան, Բանաստեղծությունը խորհրդավոր գրույց է, և որքան խորն է այդ գրույցը, այնքան անխուսափելի են լռություններն ու ծածկագրերը, «Իրատես. am», 2018, 26 հունվարի:

<sup>11</sup> Նույն տեղում:

«Ապակե քաղաք»-ը «Ձայների կղզու» է վերածվում, երբ բանաստեղծի ունկը որսում է մեր շուրջը գոյող բիրլիական ձայները, որոնք, նոր շունչ ու նոր իմաստ առած, ողողում են մեր ներկայի ապրումներն ու նոր ժամանակի հոլովությունը դողանջում ու արձագանքվում: «Նախաշխարհյան գույներ կան, որոնք ալեվետում են մեր երկրային տեսադաշտից անդին: Նկարչի աչք է պետք, որ գույները տեսնվեն-վերձանվեն-վերագոյեն և մեզ վերադարձնեն անցյալ-կորուսյալ երանգներն ու կենաց խամրած թրթիռները»<sup>12</sup>: Թամրազյանն զգուշացնում է՝ պետք չէ հմայվել ո՛չ տարաշխարհիկ, անհուն ձայներից, ո՛չ պատկերներից շողակն ու լուսեղ, քանզի «ճամփորդ ես հավիտենական, քննր չէ՝ փռչին ժամանակների, բա՛ց թող հուշերիդ լողացող կղզին և աստեղային ճանապարհ եղիր, քո աչքերում կան բյուրավոր աստղեր, քո սրտի մեջ են բյուր ուղիները ժամանակների, ու դու ապրում ես տիեզերքի հետ համաշնչապես, ու քեզ տրված է ապրել ու լինել, լինել ու ապրել...»<sup>13</sup>: Ապրել ու լինելու համար բանաստեղծը քայլում է դեպի Սկիզբ, անցնում Բանի ճանապարհներով. կանգառը տիեզերական անսահմանությունն է: Մշակույթի առաքելությունը, ըստ Թամրազյանի, «ավելի առաջ ու ետ նայելն» է: Այն ոչ միայն դեպի անցյալը կամ ապագան է միտված, «այլ դեպի խորքը, դեպի անհունը, ուր հղանում է կյանքը դեպի սկիզբների սկիզբը՝ այդ շարժումը ոլորապտույտ մի սանդղաշար է, որ դեպի անդունդներն է տանում, ուր նույնանում են անցյալն ու գալիքը»<sup>14</sup>:

Ողջը դառնում է ի շրջանս յուր,  
Ու վերջը կրկին սկիզբ է դառնում,  
Ու հորդանում է, ու դառնում է կյանք –  
Եվ ամենեքյան, և համընդհանուր... (Հ, էջ 128)

Կյանքի այս հոլովապտույտում, որ, Թամրազյանի բանաձևմամբ, «կապույտ, հոգևոր տարածք» է, արյուն ներարկողն էլ աչքն է, մեզ հսկում է մեզնից աննկատ մի «թաքուն հայացք», որ «լցվում է խորքերի թափուր», ու «հաղորդվում ենք իր պարզ հայացքին»(ՄՀԹ, էջ 138-139): Բանաստեղծի համոզմամբ՝ «կյանքի գաղտնիքը հայացքն է անհուն», նրա խորքերը, որտեղ հսկում է առմիշտ «Աչքը – իբրև խնամակալ» (ՉԿ, էջ 128), տնտղել է պետք «շերտ առ շերտ» (ՄԽ, էջ 92):

---

<sup>12</sup> Ա. Ղազարյան, Բիրլիական ձայների բանաստեղծական արձագանքը, «Հայաստանի Հանրապետություն», 1995, թ. 217, 29 օգոստոսի, էջ 4:

<sup>13</sup> Հ. Թամրազյան, Բանաստեղծություններ, էսսեներ, գր. դիմ., հոդվածներ, Ե., «Նաիրի», 2010, էջ 171:

<sup>14</sup> Հ. Թամրազյան, Հարասություններ, Ե., «Նաիրի», 2003, էջ 472:

Ա.Թովյանն իրավացիորեն նկատում է, որ Հ.Թամրազյանի պոեզիայում «Աչքը» «լայն իմաստ ունի և կյանքի հետ ունեցած հարաբերություններում... միշտ բարձր է, իդեալն է... նա է կյանքի արարիչը»<sup>15</sup>, «Որ աստղի պես բիրն է շողում»..., «Ու աչքերից հորդող ջրվեժ»..., «Պայծառացող հայացքի հուն, //Աչքի պայծառ մարգագետին»..., «Ու սիրտն աչք է, ու աչքը՝ սիրտ» (ՁԿ, էջ 128-132):

Թամրազյանի բանաստեղծական համակարգում գերակայություն են ստանում (ինչ-որ տեղ նաև ապահովում բազմիմաստություն) մի շարք սիմվոլիկաներ, արքետիպեր ու միֆական կառույցներ՝ ժամանակը, դիմակը, հայելին, միմու-խեղկատակ-ծաղրածուն, հերոսը, աչքը, տապանը, կենաց ծառը, խաչը, սուրբ լեռը, բառը, կուռքը, ջուրը, ջրհեղեղը, քառույթը, խավարը, Քրիստոսը, Սիզիփոսը, Իկարոսը, Նոյը, Հուդան, Ղովորը, աղե արձանը և այլն, որոնք դառնում են բանաստեղծական պատկերի գաղափարական կրողներ ու կառույցի հենասյուներ: Իսկ բանաստեղծին օգնության է գալիս «շնչավոր, կենդանի բառը», իմաստ տալիս Խորքին, նոր խորքեր բացում ու ցավն ամոքում: Մարդկանց բառերն իրար է կապում ցավը: **«Ցավից ու բառից հետո գալիս է լույսի զգացողությունը:** Գալիս ու ներծծվում է բանաստեղծի մեջ. նրա միջով՝ Տեսակի մեջ ու դառնում Փրկություն»<sup>16</sup> (ընդգծումը մերն է Ռ.Ս):

Բառ (Բան) - լույս - փրկություն (Քրիստոս) սուրբգրային գաղափարը («Եվ Աստված ասաց. «Թող լույս լինի», և լույս եղավ» (Հին Կտակարան, Գիրք Ծննդոց, 1.3): «Եվ նա (Մարիամը՝ Ռ.Ս.) որդի պիտի բերի և Նրա անունը պիտի դնես Հիսուս, որովհետև Նա պիտի փրկի Իր ժողովրդին իր մեղքերից» (Նոր Կտակարան, Մատթեոս 1.21)) առաջնային է Թամրազյանի պոեզիայում, որտեղ հաճախ են զուգահեռվում լույսն ու Քրիստոսը («Որ հասնես ներքին լույսի ետևից, //Դեռ պիտի հոգու անդունդներ անցնես» (ՄՀ, էջ 22)), միֆեր, որոնց բանաստեղծը միշտ է ապավինում:

«Արքայորդին» վերնագրվածում Սուրբ լեռան ճանապարհով Աստծո որդին է իջնում. «Աչքերն ի գիլ, //օրերն ի գիլ, //ու նա գալիս է երկնքից, //ու իջնում է վաղվաղակի» (Ա, էջ 31): Ինչպես տեսնում ենք, բանաստեղծության հիմքում Նարեկացու «Հարության» տաղն է, որտեղ Մասիսի աջ կողմից իջնող և դեպի Երուսաղեմ ընթացող նշանավոր սայլը տանում է Արքայորդուն: Ամեն ինչ նույնն է, միայն. «-Ի գիլ, ի գիլ, սայլիկն՝ ի գիլ //գար ի Մասեաց յաջ կողմանէն, //մինչեւ ի Սուրբ Էջմիածին» (Ա, էջ 31): Սայլն

<sup>15</sup> Ա.Թովյան, Ապագայի ներկայությամբ, Ե., «Սովետական գրող», 1988, էջ 33:

<sup>16</sup> Հ.Թամրազյան, Բանաստեղծություններ, էսսեներ, գր. դիմ., հոդվածներ, Ե., «Նաիրի», 2010, էջ 181:

ընթանում է դեպի Սուրբ Էջմիածին՝ սրբազան առաքելությունն իրագործելու՝ ժողովրդին նախ՝ փրկելու, ապա և մաքրագործելու:

Նկատենք՝ «Աղեղնավոր» ժողովածուն, որտեղ ներառված է «Արքայորդի» բանաստեղծությունը, 1993 թվակիր է: 90-ականների թեժ օրերին, երբ «մահն - իբրև մի կույր չղջիկ //Տարածությունն էր թրատում», երբ Նեոի ատամների տակ օրն էր հայտնվում, մի անմեղ հարց էր հղանում. «Ո՞ւր են հետքերը փրկիչի... //Ո՞ւր է արդյոք իր փրկիչը //Սուրճ ջրերի վրա քայլող» (Ս, էջ 35): Դարձդարձիկ այս օրերին այս պատճառով է բանաստեղծն ապավինում Քրիստոսի միջին: Նկատենք նաև՝ Թամրազյանի պոեզիայում ապոկալիպտիկ միջերին գուգահեռ քայլում են Նեոը՝ Հակաքրիստոսը, Դեղին Մոլոքը, Սև աղանդը, Սև մոգությունը, Հուդան. «Մատնությունն է կրկին զարթնում, //Զքանում է օրը անհետ, //Ու երեսուն իր արծաթով //Նա սակարկում է մթան հետ (Ս, էջ 37): Իսկ «Լուսության ծես»-ում «փորձում են մարդիկ որսալ //Եվ հորինել են մի նոր կրոն» (ԼԾ, էջ 25): Փրկության ի՞նչ բանաձև է առաջարկում բանաստեղծը. գրել մի նոր «Եղծ աղանդոց»:

Հոգևոր համադետ ապրող քաղաքը հիշեցնում է սուրբգրային քաղաքները՝ Սողոմն ու Գոմորը: Հայտնվում է մաքառող Ղովտի կերպարը՝ ետ չնայելու պահանջով: «Ու քաղաքները թողած քո հոգու //Հեռանում ես դու՝ **ես նայող մի Ղովտ**» (ընդգծումը մերն է՝ Ռ.Ս.): Նկատենք՝ Թամրազյանը շրջանցում է պատվիրանը՝ անպարտ կարոտների ու հուշերի նկատմամբ հարգանքի տուրք ու խոնարհում.

Հոգու տարանցիկ ճանապարհներով,  
Որ ուղիներն են տատանվող հողի,  
Որով շարժվում է կարոտդ անպարտ,  
Ու հուշը, որը այս երկրում թողիր... (ԼԾ, էջ 61)

Ուրվագծվում է և Ղովտի կնոջ կերպարը՝ փոխարկված աղե արձանի, որ առաջ է նայում: Այստեղ են սուրբգրային մի շարք միջեր՝ Եղիա մարգարեն, ջրհեղեղը, տապանը, քառսը, Ղազարոսը.

Ու տեսնում ենք մենք քեզ - քառաթև ու հրկեզ,  
Ղազարոսի նման, որ ելնում է նաշից,  
Դու ծնվում ես նորից, զի խաչն է քեզ կնքել,  
Ու խելահեղ սիրով դու իջնում ես խաչին (ԼԾ, էջ 65):

Խաչը հոգևոր լույսն է խորհրդանշում, Ղազարոսը՝ քաղաքի վերակենդանացումը: Հեղինակն ակնարկում է և Քրիստոսի մասին.

Ու չգիտես՝ տեսել ես, թե չես տեսել:  
Հին ձայները, սովերներն են սուս կանչում,  
- Քայլել եմ այս ճանապարհով ես քեզ հետ,  
Հազար անգամ տեսել ու չեմ ճանաչում (ԼԾ, էջ 59):

«Ձայն բարբառոյ» վերնագրվածում, որը նույնպես աստվածաշնչյան է, «չեմ ճանաչում»-ը արդյո՞ք Մատթեոսի 25-րդ առակը չի հիշեցնում՝ «Տասը կույսերի և քանքարների առակը: Վերջին Դատաստանի նկարագրությունը», որտեղ հինգ հիմար կույսերի՝ դուռը բաց անելու խնդրանքին Քրիստոսը պատասխանում է. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, ես ձեզ չեմ ճանաչում»: Սուրբգրային այս անդրադարձումով բանաստեղծը կրկին ու կրկին հիշեցնում է Վերջին Դատաստանի մասին:

Դու կաս, իբրև հիշող արյուն,  
Արյան կանչ է, արյան անուրջ,  
Թե ինչպես էր Նոյը նայում  
Իր աշխարհին լեռան լանջից...  
Եղիցի՛ լույս: Եվ լո՛ւյս եղև:  
Ու քեզ հետ են միշտ էլ եղել  
Երագներիդ ջրհեղեղը  
Ու արթնացման ջրերը ջինջ (Ա, էջ 29):

Թամրագյանի պոեզիայում առանցքային դերակատարում ունի ջրհեղեղի միջը (զուգահեռվում են Նոյի, տապանի, սուրբ լեռան միջերը), որը մետաֆորիկ պատկեր է ստեղծում. կյանքի ընթացքը ջրհեղեղ է հիշեցնում, որն անընդհատ փորձությունների է ենթարկում մարդուն՝ երկատելով կյանքը երկնայինի ու երկրայինի: Կյանքը նաև քող է ու թանձր խավար.

Կյանքը քող էր՝ քեզ Աստծուց բաժանող,  
Աչքերը փակող մի թանձր խավար –  
Ինձ բաժին հասավ մի մույթ, դաժան օր,  
Որ Աստծո լույսն էր ինձնից քողարկել:

Բոլորից լքված – ես հասու եղա,  
Որ իմ մեջ պիտի այդ մույթը ճեղքեմ –  
Կյանքն ասպարեզ է ու հոգու տեղանք,  
Ամայության մեջ դու պիտի երգես ... (ՄՀԹ, էջ 86)

Օրերը կվերահանդերձավորվեն, կսերտեն իրենց դերերը նոր, պատմությունը՝ հին խեղկատակը, խելահեղության կմղի հերոսին, ու խոսքը կրկին կհասնի ավարտին: «Մտքի կատարյալ խենթանոց», որտեղ նոր ոչինչ չկա. «...հին կարոտն է լուռ ու համբերող //Այդ խենթանոցի դռները փակում»:

Բանաստեղծը չի դժգոհում իր բաժին բախտից. նա ապավինել է բառին, որն այլևս գաղափար է. «Ես բառերին եմ իմ կյանքը հանձնել... //Ես զրուցում եմ իմ բառերի հետ, //Ինքս ինձ հետ եմ ես հիմա խոսում (ՄԽ, էջ 52,53):



Բայց պատահում է՝ ի ծնե կույր ամբոխը խաչելու է տանում բառը: Ամբոխը, Թամրազյանի համոզմամբ, ծամածոված, շերտավոր դիմակ է, կակազելով իր դերն է միշտ կարդում, իր կրկնակն է, կանգնած է իր դիմաց: Հաճախ էլ դիմակն ինքն է ամբոխվում, ու տրոհվում, փոշիանում են մարդիկ. «Ո՛չ մի ամբոխ ոչի՛նչ կյանքում չի փոխի, //Նա դիմակ է, որ իր դերն է միշտ կարդում՝ //Եթե մարդը խամաճիկն է ամբոխի, //Եվ ամբոխը խամաճիկն է մի մարդու» (ՄԽ, էջ 49): Ի՞նչ անել. «կտրել ամբոխի լեզուն» (ՄԽ, էջ 50), փորձել խոսք կորզել դիմակից և ապա պատռել այն, որ հաղթահարվի, վերջանա «մարդու մեջ անընդհատ կրկնվող էս ֆարսը»<sup>17</sup>: Պատռելուց հետո այն ավելի մերկ, ավելի տեսանելի կդառնա: Ու չի կորչի «խոսքի թելը մնայուն», որովհետև կենդանի բառն է «հին թելերով նոր կյանք գործում» (ՄԽ, էջ 206):

Հեղինակն առավել քան համոզված է՝ ապրեցնել է պետք բառը՝ միակ սպեղանին, որ «ուղենշում է հասարակության ներքին հոգևոր հոսքերը, շնչավորում նրա ընդարմացող, անկենդան ետնախորքերը»: Նա է «կյանքի շնչավորը և շնչերակը... պիտի հնչեցվի լիաթոք, ինքնազեղուն, զերծ կապանքներից, ոչ թե թափառի կյանքի ետնաբեմում՝ ասպարեզը թողնելով խամաճիկներին ու խեղկատակներին»<sup>18</sup>:

Ու անհուտորեն փնտրեցի երկար  
Մարդկային մի դեմք, ազնիվ դիմագիծ,  
Սակայն եղածը խմոր էր ու կավ,  
Ոչինչ չտեսա - դիմակից բացի:

Եվ անիմաստ են բոլոր ճիգերն իմ,  
Դեմք չունեն մարդկանց կրքերը ազահ,-  
Խամաճիկներ են խամաճիկների  
Եվ դիմակներ են - դիմակներ հագած (ԶԳ, էջ 253):

Ստեղծագործությունն, ըստ Յունգի, «անգիտակցականի խորքերից» աճող «արքետիպերի անգիտակցական վերարտադրություն է»: «Արվեստագետն իր հոգեբանության այդ «հնադարյան» շերտի նկատմամբ ունեցած հատուկ զգայունության շնորհիվ արքետիպերը վերարտադրում է ստեղծագործության մեջ՝ այդ չեզոք ու դատարկ սխեմաները միշտ լցնելով

---

<sup>17</sup> Հ.Թամրազյան, Բայց ինչպես ապրենք այսպես ականա, «Հայացք Երևանից», 2002, թ.6, էջ 32:

<sup>18</sup> Հ.Թամրազյան, Հարասություններ, Ե., «Նաիրի», 2003, էջ 476:

ինքնատիպ բովանդակությամբ»<sup>19</sup>: Այս հնագույն մոդելները Յունգն անվանեց «արքետիպ-անձեր». հիմնականներից է Անձի (կամ Դիմակի) արքետիպը, որ «խորհրդանշում է անձի կեղծ իրացումը, այսինքն՝ այն դերը, որի հետ իրեն նույնացնում է մարդը սոցիալիզացիայի ընթացքում»: Այն «իրացվում է... կենտրոնական հերոսի երկվորյակ գործող անձանց կերպարներով, որոնց նա նմանակում է կամ որոնցից փորձում է հեռու մնալ»<sup>20</sup>:

Ճշմարիտ գրողը, ըստ բանաստեղծի, միշտ տալիս է իրականության խորքային պատկերը, բայց և սնում ու նախախնամում է այն: Ու որքան մտալ է այդ պատկերը, այնքան բազմապատիկ է այն հոգևոր ջանքը, որ «ծախսում է արվեստագետը կյանքի մտալ ու աղճատված համապատկերը հաղթահարելու, նրա հոգևոր միջուկը վերակերտելու համար: Եվ դա դառնում է «ձայն բարբառո հանապատի», եթե չի վերածվում ամենօրյա ինքնագոհության»<sup>21</sup>:

Արդյո՞ք ամենօրյա ինքնագոհության արդյունք չէ Թամրազյանի պոեզիան, որի կառուցվածքային սկզբունքը կյանքի ու մահվան միջերի հակադրույթն է: Բանաստեղծը հաճախ է գրույց ծավալում կյանքի ու մահվան շուրջ.

...Ու կյանքն անցնում է լույսի պես արագ,  
Անէանում է մի ակնթարթում,  
Ու մտորում ես - մեկնելուց առաջ,  
Թե հանուն ինչի՞ աշխարհ եկար դու...  
Լոկ նրա՞ համար, որ նա պահպանի  
Բնագող սաղմի, բնագող սեռի... (ԱԵ, էջ 148-149)

Անպատասխան ինչուները շատ են, հեղինակային հավատամքը՝ մեկ. «Ինձ բոլորի պես տրված է մեռնել, //Սակայն ես կյանքի՛ ուղին եմ ընտրում... //Տիեզերքն ինքը պայթող մի սերմ է, //Ժամանակների ճառագող պտուղ...» (ԱԵ, էջ 153) Համոզված է՝ մարդիկ չեն անհետանում, այլ «մխրճվում են անգիտության մեջ» (ՄԽ, էջ 200), երբ իբրև քույրեր իրար են հարում կյանքն ու մահը: Հաջորդում է ավետիսը՝ «թաքուն լուրը - //Հարությունը ամեն՞ ր է» (Հ, էջ 193): Եվ՝ ահագնացող հարցեր. «Բայց մենք որտե՞ղ ենք, մենք կա՞նք, թե՞ չկանք, //Ո՞վ է մեր տերը այս տիեզերքում» (ԱԵ, էջ 117): Մշուշվում է Տիրոջ դեմքը, ու տարածվում է քառուր:

<sup>19</sup> Օ.Տուրիշևա, Արտասահմանյան գրականագիտության տեսությունը և մեթոդաբանությունը, Ռուս. թարգմ. Ա.Ջրբաշյանի, Ե., «ԵՂՃ», 2017, էջ 92:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 94-95:

<sup>21</sup> Հ.Թամրազյան, Պարականոն Ավետարան, «ԱԶԳ», 2010, 18 փետրվարի, թ. 28, էջ 6:

Չգոյության վախ – գոյության սարսափ,  
Որ մենք այդպես էլ չենք հաղթահարում,  
Ու ամեն անգամ քնից արթնացած՝  
Մեզ հետ վախերն են հարություն առնում...  
,  
Ասես ապրում ենք ամայի երկրում... (ՄԽ, էջ 201)

«Տիեզերքի ներդաշնությանը ապավինած բանաստեղծը ժամանակակից միֆի գաղափարական հարցադրումներին տեղի տալով, զգում է քառսի ուժգնացումը՝ խավարի ու սարսափի ածանցումներով: Քրիստոսի «եկվորությունն» ու «օտարությունը» իր մեջ առած..., նա դեգերում է գոյի-չգոյի սահմաններում»<sup>22</sup>:

Սակայն քառսն էլ անպարտելի ու հարատև չէ. նրան հակադրվում, հաղթում է Խոսքը, ու լույսն է հղանում. «Ու մեր օրերում լինում է հանկարծ, //Որ մեզ պատում է դատարկը անհուն... //Ու այնժամ խավարն՝ իբրև մայր արգանդ //Կյանքի հատակից լույս է հղանում...» (ՄԽ, էջ 206)

Կյանքի ու մահվան շուրջ զրույցը բանաստեղծը զարգացնում է «Սրբազան խավար»-ում («Անգիտակցություն – սրբազան խավար, //Որ առաքում են անվախճան խոր քուն, //Դու անմատույց ես ողջերի համար... (ՄԽ, էջ 198)), որտեղ խորքն էլ է սրբազան, խոսքն էլ է սրբազան, խորհուրդն էլ է սրբազան, ուխտն էլ է սրբազան: Արյան պտույտ է հիշեցնում «կյանքի ու մահվան այս արարումը». այնպես հեշտ ենք արդեն մեռնում, ասես «մեկնում ենք սրբազան ուխտի» (ՄԽ, էջ 147):

Սուրբգրային է «Սրբազան խավար» վերնագրվածի բնաբանը՝ Հին Կտակարան՝ Գիրք Ելից, 20.21. «Մովսեսը մտավ խավարի մեջ, ուր գտնվում էր Աստված»: «Եվ Սինա լեռն ամբողջությամբ ծխում էր, որովհետև ՏԵՐԸ դրա վրա իջել էր կրակով, և կրակը հնոցի ծխի նման էր դուրս գալիս, և ամբողջ լեռը սաստիկ դողում էր» (Գիրք Ելից, 19.18): Աստված Մովսեսի մոտ եկավ սրբազան խավարով պատված, որպեսզի ժողովուրդը (Բարայելի որդիները) լսի իր խոսքը և միշտ հավատա Մովսեսին: Նաև պատվիրեց սահման դնել լեռան շուրջը և սրբել այն. ով լեռանը դիպչի, կմեռնի. «Ասես սահմանն են ուղեղով քաշել – //Ու հոգիներն են վառվում անկրակ //Սահմանից անդին ...» (ՄԽ, էջ 203): Սակայն «խոր քնի մեջ սահմաններ չկան», չկա մահ, այլ կա «հավերժող երազ», որտեղ հարակա հոգին զուգահեռվում է կենաց ծառին.

Դու անցողիկ ես, նա հարակա է,  
Նա երգեցիկ է – ինչպես կենաց ծառ,

---

<sup>22</sup> Ն.Ղազարյան, Ներասացական բանաստեղծությունը, «Գրական թերթ», 2008, թ.29 (2948), 5 սեպտեմբերի, էջ 6:

Որ հոգու մեջ է արմատակալել...  
Հոգու հողից են սերունդներն աճում,  
Նրա երգեցիկ եղեգը ես եմ... (ՄԽ, էջ 196)

Ժողովածուում Մովսես-հեղինակ կերպարային հաջորդականություն է տեղի ունենում, որն արմատավորվում է հեղինակի ներքին խռովքով, նշյալ միֆի ու հեղինակ-կերպարի սահմանախախտ վիճակով: Աստծո խոսքով ու լույսով իմաստնացած բանաստեղծը, ում այլևս հասու են սրբազան խավարն ու սրբազան խորհուրդը, վաստակել է Մովսեսի դերը ստանձնելու իրավունքը: Թամրազյանի կարծիքով, յուրաքանչյուր ժամանակ իր հոգևոր ազդակներն ունի, որոնք փրկում են նրան ցնցումներից: Այդ դերը հաճախ արվեստագետին է վերապահված, որ «ներփակվելով արտաքին աշխարհից, հակադրվելով նրան, փորձում է նրա տարերային, կույր հոսքերին *հոգևոր ընթացք* տալ»<sup>23</sup>, քաջ գիտակցելով՝ իրավունք չունի կորցնելու ոգու արիությունը, եթե անգամ կանգնած ենք «մեծ փլուզման եզրին», ու անհնար է առաջն առնել:

Դու կտանես հոգու տապանում  
Կյանքի հրաշքը՝ իբրև առասպել,  
Անկեզ կրակը նա է պահպանում՝  
Իբրև խավարում շողացող աստղեր՝  
Հոգին տանելով նոր ճամփորդության  
Հույսի անառիկ լեռնապարերով,  
Որ դու ես կերտել հոգու փորձությամբ՝  
Անկումներն ահեղ հաղթահարելով (ԲԷ, էջ 45):

Այո՛, իրավացի է Թամրազյանը, արվեստագետին է տրված ցնորամիտ հոսքերի մեջ ընկալել օրերը, տարիներն ու դարերը կապող համընդհանուր հայացքը, անհուն աչքը, այդ աչքը սնող սիրտը, դարերի վեժքը հունավորող խորին խոհր: «...այդ աչքը ես եմ, այդ սիրտն իմ մեջ է բաբախում»<sup>24</sup>, - ասում է արվեստագետը՝ ճշմարիտ համոզմունքով՝ չարիքի ու անեծքի մեջ թաղված աշխարհին հաղթել կարող է «լույս բանաստեղծությունը, որն է՝ Ոգին, որն է՝ անմահությունը»<sup>25</sup>:

---

<sup>23</sup> Հ.Թամրազյան, Բանաստեղծություններ, էսսեներ, գր. դիմ., Ե., «Նաիրի», 2010, էջ 323:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 323-324:

<sup>25</sup> Հ.Թամրազյան, Բայց ինչպես ապրենք այսպես ակամա, «Հայացք Երևանից», 2002, թ.6, էջ 32:

**Ռ.Ստեփանյան**

**Սուրբգրային միջերը Հրաչյա Թամրազյանի պոեզիայում  
Ամփոփում**

Միֆապոետիկայի առումով բավականին ուշագրավ է Հրաչյա Թամրազյանի պոեզիան, որտեղ գերիշխում են սուրբգրային թեմաների անդրադարձումներն ու միջերը: Միֆակիրառումը հնարավորություն է ընձեռում բանաստեղծին խուսափել հռետորական-հրապարակախոսական ոճից, լայնորեն օգտվել կերպարաստեղծման ու պատկերավորման միջոցներից:

**R. Stepanyan**

**Saint written myth in Hrachya Tamrazyan's poetry  
Summary**

Hrachya Tamrazyan's poetry is rather attention calling according to mythopoetry, where references and myths of Bible topics dominate. The use of myths allows the poet to avoid from oratoric, publicity style, to get use of character creating and expressive means widely.

**Р. Степанян**

**Священнописьменные мифы в поэзии Грачя Тамразяна  
Резюме**

С мифопоэтической точки зрения весьма примечательна поэзия Грачя Тамразяна, где преобладают мифы и отражения святописменных тем. Применение мифа дает возможность автору избежать риторического-публицистического стиля, широко пользоваться средствами создание образов.

*Խմբագրություն է ուղարկվել 01.07.19  
Հանձնարարվել է գրախոսության 08.07..19  
Տպագրության է հանձնարարվել 15.10.19*

**ՏԱԹԵՎԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ**

Խաչատուր Աբովյանի անվ. ՀՊՄՀ  
հայ նոր և նորագույն գրականության և նրա  
դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ  
[tatev111@mail.ru](mailto:tatev111@mail.ru)

**ԺԱՄԱՆԱԿԻ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ՀՐԱՉՅԱՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԱԿԱՆ  
ԸՆԿԱՆՈՒՄՆԵՐԸ**

**Բանալի բառեր և արտահայտություններ.** Ժամանակ, շարժում, զարկերակ, դինամիկա, անցավոր ու մնայուն, միասնական շղթա, հիշողության ծիր, մոռացման փոշի, բանաստեղծական մոդել:

**Ключевые слова и выражения:** Время, движение, пульс, динамика, преходящий и постоянный, еденая цепь, граница воспоминаний, пыль забвения, поэтический модель.

**Key words and expressions:** Time, movement, pulse, dynamics, transient and permanent, united chain, contour of memory, dust of oblivion, poetical model.

Հր. Հովհաննիսյանը մեր այն բանաստեղծներից մեկն է, որ միշտ ձեռքը պահել է ժամանակի զարկերակին, զգացել նրա տրոփյունը և ճշգրիտ կերպով արձանագրել իր բանաստեղծություններում: Նա կարողացել է ամուրձողակներով շաղկապել ժամանակի անցյալ-ներկա-ապագա չափումները՝ անցյալն իմաստավորելով ներկայում թողած հետագծով, ներկայում ուրվագծելով ապագայի վերաբեյալ իր տեսլականը: Բոլոր դեպքերում՝ նրա ուշադրության կենտրոնում եղել է ժամանակի հարահոսում գտնվող անհատը, որը ցանկանում է ճանաչել նախ ինքն իրեն, ապա իր միջոցով նաև աշխարհը, հաղորդակցվել նրա անցուդարձին:

Նրա բանաստեղծություններում ժամանակի զարկերակը մերթ փափախել է <<ուժգնությամբ, դինամիզմով ու հեծեձանքով>>, մերթ հանդարտ ու համաչափ, մերթ թույլ ու անօգնական կծկումներով: